ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 22 հոկտեմբերի 2018թ.
ժամը. 15:15

*Մասնակցում էին.*

Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝ **Ա.Ջալաղյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
**Ռ. Անդրեասյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
**Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )

**1. Հայտերի բացման մասին**

---------------------------------------------------------

(Գ. Մկրտչյան)

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 2018 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 15:15-ին ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց փականների գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Պտտվող սկավառակով փականներ | 25 500 000<br>(քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) |

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

**1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը**

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ |

**1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:**

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

«ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.4 Մասնակցի առաջարկած գինը**

(ՀՀ դրամ)

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | Պտտվող սկավառակով փականներ | 33 900 000 (երեսուներեք միլիոն ինը հարյուր հազար) | 40 680 000 (քառասուն միլիոն վեց հարյուր ութսուն հազար) |

**1.5 Հայտերի գնահատման մասին:**

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

*Գնահատող հանձնաժողովը որոշեց՝*

«ՄԱՄԼԻՉ-ՆԿ » ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.6 Բանակցությունների վարման մասին:**

Քանի որ մասնակցի առաջարկած գինը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.7 «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:**

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումը բավարար գնահատված մասնակցին ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ______________ | Գ. Մկրտչյան |
| Անդամներ՝ | ______________ | Ա. Ջալադյան |
| | ______________ | Ռ. Անդրեասյան |
| | ______________ | Ս. Մելքոնյան |
| | ______________ | Ա. Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ______________ | Ն. Նիկոլայան |